

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» ----- 2019թ.

N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

**«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ԵՎ «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ
ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՄՆԵՐԻ
ՀԱՇՎԱՐԿՈՒՄԻՑ ՈՒ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշման N2 հավելվածի 5-րդ կետով, «Երևանտրանս» և «Ձևավորում» փակ բաժնետիրական ընկերությունները ֆինանսական առողջացման նպատակով՝

Երևանի ավագանին որոշում է.

1. «Երևանտրանս» և «Ձևավորում» փակ բաժնետիրական ընկերություններին ազատել 2017 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթից հաշվարկված շահութաբաժինների վճարումը Երևանի բյուջե սահմանված ժամկետում չկատարելու համար տոկոսների հաշվարկումից ու վճարումից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ԵՎ «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԻՑ ՈՒ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի ավագանու **2018** թվականի հունիսի **26**-ի **հ.153**-Ա և Երևանի քաղաքապետի **2018** թվականի հուլիսի **9**-ի **հ.2501**-Ա որոշումների համաձայն՝ «Երևանտրանս» և «Ձևավորում» փակ բաժնետիրական ընկերությունները (այսուհետ՝ Ընկերություններ) **2017** թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած **24085.0** հազ. դրամ և **4323.2** հազ. դրամ գույք շահույթներից **2018** թվականին Երևանի բյուջե պետք է վճարեին համապատասխանաբար **9634.0** հազ. դրամ և **1729.3** հազ. դրամ շահութաբաժիններ, սակայն փաստացի վճարում չի իրականացվել:

Ընկերությունների կողմից շահութաբաժինների գումարների սահմանված ժամկետներում չվճարելը պայմանավորված է Ընկերությունների ֆինանսական ցուցանիշներով, մասնավորապես ազատ դրամական միջոցների խիստ անբավարարությամբ:

«Երևանտրանս» ՓԲԸ-ի ընթացիկ ֆինանսական միջոցների անբավարարությունը հիմնականում պայմանավորված է դեբիտորական պարտքերի հավաքագրման հանգամանքով՝ **26.04.2019**թ. դրությամբ դեբիտորական պարտքերը կազմել են **544.7** մլն. դրամ, որից ժամկետանց պարտքերը՝ **513.6** մլն. դրամ, կամ ընթացիկ պարտքերը կազմել են **31.1** մլն. դրամ:

Դրամական միջոցների ազատ մնացորդը **26.04.2019**թ. դրությամբ կազմել է ընդամենը **61.3** հազ. դրամ, իսկ կրեդիտորական պարտավորությունները՝ **93.8** մլն. դրամ:

Դեբիտորական պարտքերի հավաքագրման մեծ մասի գծով ընթանում են դատական գործընթացներ կամ պարտապանները ընդգրկված են դատարանի վճիռներով լուծարման և սնանկության գործընթացներում:

«Ձևավորում» ՓԲԸ-ի դեպքում ֆինանսական ցուցանիշների վատթարացումը պայմանավորված է նրանով, որ **2018** թվականին ընկերությունը փաստացի մասնակցել է **21** մրցույթների, որոնցից հաղթող է ճանաչվել և կնքել պայմանագրեր միայն **4**-ի դեպքում, արդյունքում էլ նախատեսված **98.5** մլն. դրամի դիմաց եկամուտ է ստացել **41.0** մլն. դրամի, կամ **2** անգամ պակաս:

Ներկայումս դրամական միջոցների անբավարարության հետևանքով Ընկերությունները հնարավորություն չունեն վճարել շահութաբաժնի գծով պարտավորությունը, և Երևանի ավագանու **2010** թվականի մարտի **18**-ի **հ.69**-Ա որոշմամբ հաստատված «Երևան համայնքի սեփականություն համարվող **50** տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինները սահմանված ժամկետում չվճարելու դեպքում տոկոսների հաշվարկման, վճարման եվ պարտավորությունների գանձման» կարգի դրույթների

համաձայն՝ սահմանված ժամկետում շահութաբաժինների չվճարելու արդյունքում հաշվարկվում են տոկոսներ ուշացրած օրերի համար՝ այսպես **20.05.2019թ.** դրությամբ հաշվարկված տոկոսները կազմում են «Երևանտրանս» ՓԲԸ-ի համար շուրջ **735.0** հազ. դրամ, իսկ «Չնավորում» ՓԲԸ-ի համար՝ **132.0** հազ. դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտնի չէ ինչ ժամանակահատվածում հնարավոր կլինի Ընկերությունների կողմից մարել շահութաբաժինների գծով պարտավորությունները, Ընկերություններին առողջացնելու նպատակով, առաջնորդվելով Երևանի ավագանու **2010** թվականի մարտի **18**-ի **հ.69**-Ա որոշմամբ հաստատված «Երևան համայնքի սեփականություն համարվող **50** տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինները սահմանված ժամկետում չվճարելու դեպքում տոկոսների հաշվարկման, վճարման եվ պարտավորությունների գանձման» կարգի **5**-րդ կետով, առաջարկվում է հետագայում չհաշվարկել տոկոսներ և ազատել Ընկերություններին մինչ այժմ հաշվարկած տոկոսների վճարումից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՔ

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ԵՎ «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԻՑ ՈՒ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանտրանս» և «Ձևավորում» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2017 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժինների վճարումը Երևանի բյուջե սահմանված ժամկետում չկատարելու համար տոկոսների հաշվարկումից ու վճարումից ազատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՔ

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ԵՎ «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԻՑ ՈՒ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանտրանս» և «Ձևավորում» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2017 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժինների վճարումը Երևանի բյուջե սահմանված ժամկետում չկատարելու համար տոկոսների հաշվարկումից ու վճարումից ազատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի փոփոխությունների անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ